

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՍՆԱ ԾՈՒԵՐ»-Ի «ԴԱՎԻԹ» ԱՆՎԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ- ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ

ՍԵՐՅՈՑԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայ դիցազներգության հերոսների անունները դիցաբանական իմաստ և բացատրություն ունեն: Օրինակ՝ **Սանասար** անունը կազմված է **սան** (ծնունդ, ծին, զավակ) և **սար** (գլուխ, գագաթ, բարձունք՝ ուղիղ իմաստով, և վեհ, գլխավոր՝ փոխաբերական իմաստով)¹ բառերից և հայ դիցաբանական պատումներում ունի **Վեհածին, Բարձրյալ**, բարբառային տարբերակով՝ **Ջոջ** նշանակությունը: Քանի որ Սանասարի մայրը երկնային զորությամբ էր հղիացել, ինչպե՞ս կարող էր էպոսաստեղծ ազգն իր հերոսի անվան ու հետևաբար բնույթի մեջ աստվածային բացարձակության խորհուրդը չտեսնել: Ասվածն ավելի որոշակի է էպոսի մյուս դիցհերոսի անվան պարագայում. **Մհեր**-ը հայոց դիցարանի օրենք-օրինաչափության ու արդարադատության, ուխտի ու դաշինքի Աստված **Միհր**-ն է: Հայոց դիցազներգության այդ անունն էլ, պարզ է, դիցաբանական իմաստ է պարունակում. լեզվաբանորեն բառանունը կազմված է **մ** հունչարմատով (պահպանումի, հաստատումի իմաստ է արտահայտում), **ահ** (մեծություն, հզորություն) և **ար** (սերում, արարում) բառարմատներով² և նշանակում է արարչական արարումը պահող-պահպանող, հաստատող:

Անցնենք, սակայն, էպոսի մեզ հետաքրքրող **Դավիթ** անվանը, որի դիցաբանական ծագումն ու իմաստը առաջին հայացքից (կամ, ավելի ստույգ, ժամանակակից ընկալմամբ) այնքան էլ որոշակի չեն. այն ի սկզբանե զուգորդվել է հրեական Դավիթ թագավորի անվան հետ մի կողմից³ և չար ոգու կամ հակամարդու իմաստ ձեռք բերած **Դևի** (այդ բառաձևից բխող և նույնպես բացասական իմաստ արտահայտող դավ, դավադրություն, դիվային, դիվահար և այլն բառերի) հետ մյուս կողմից: Առաջինի դեպքում ասենք, որ այն բնավ ճիշտ չէ, ավելի ստույգ՝ ճիշտ հակառակը. հայերենի **Դավիթ** անվան մեջ է պետք փնտրել

¹ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Եր., 1979, էջ 170-171 և 182-183:

² Հունչարմատի և բառարմատների ստուգաբանության մասին տե՛ս Մլակ Կալոսյանի կազմած «Հայոց լեզվի խորհրդարան (Աստվածաշունչ)» բառարանի (Եր., 2001) համապատասխան հոդվածները:

³ Էպոսագիտության մեջ հաճախ այս զուգորդությամբ էլ առաջնորդվել են հայ դիցագունի անունը ստուգաբանելիս: Այսպես մտածողները ամենուր սեմական ու սեմածին հրեական (որպես թե՛ «ընտրյալ ժողովրդի») հիմքեր են տեսնում:

հրեական **Դավիթ** անվան հիմքերը: Այս կապակցությամբ հիշենք մեր մեծ գրողի՝ Ավ. Իսահակյանի առաջարկած, շատ բան ասող, բայց, ցավոք, էպոսագիտության մեջ անտեսված «հիպոթեզը». «Ո՛չ իբրև պարադոքս, այլ իբրև հիպոթեզ պիտի ասենք, որ «Դավիթ» կոչումը գալիս է չափազանց շատ խորին հնությունից: Հնդկական վեդաների մեջ աստվածների ընդհանուր անունը Դյավ (ճիշտը Դևա-ն է, քանի որ այնտեղ deva է գրված - Ս. Մ.) է, որը նշանակում է ամենագոր, լուսավոր, պայծառ... Կարելի է մտածել, որ Դավիթ անունը հոմանիշ չէ բիբլիական նշանավոր հովիվ թագավորի՝ Դավթի հետ, այլ, հավանաբար, վերջինս էլ նույն վեդայական աղբյուրից է ծագել»⁴: Հիրավի, դա էպոսի խորքային՝ արքետիպային շերտերը տեսանելուց ծնված «հիպոթեզ» է, որը դիցագիտության ու էպոսագիտության զարգացման մերօրյա դիրքերից լրացնելու և ճշգրտելու դեպքում հիանալի «հիպոթեզ» կձառայի մեր էպոսը էլ ավելի խորքային հասկանալու համար: Միանգամայն ճիշտ է նկատում մեր գրողը, որ կարճամտություն է Դավիթ անունը հրեական հովիվ թագավորի անվան հետ կապելը, քանի որ հրեական Բիբլիայից շատ ավելի վաղ հնդկական վեդաներում (մ. թ. ա. II հազարամյակ) արդեն կա անվան իմաստակիր բառարմատը՝ Դյավ-ը (Դևա-ն), որը հնդկական դիցաբանության մեջ նշանակում է աստվածների ողջ դասը, Ռիգվեդայի լեզվով՝ «բոլոր աստվածներին» (դասն ընդգրկում է 33 աստվածների, որոնք բաժանվում են երկնային, մթնոլորտային և երկրային աստվածների)⁵: Սակայն նշենք, որ վեդայական դիցաբանությունը մ.թ.ա. 2-րդ հազարամյակում Հնդկաստանի հյուսիս և արևմուտք թափանցած արիների դիցաբանական պատկերացումների ամբողջությունն է, պատկերացումներ, որոնցում, պարզ է, պահպանվել են հնդարիների նախնիների դիցաբանական հավատալիքները, այդ թվում, իհարկե, դևա-աստվածների մասին հավատալիքները: Մինչ վեդայական դևայի այդ նախահիմքերին անդրադառնալը ավելացնենք, որ բառ-խորհուրդը ոչ էական տարբերություններով առկա է արիական դիցաբանական գրեթե բոլոր պատկերացումներում, ինչպես օրինակ՝ հին հունականում՝ **Դիոս**, հին իրանականում (Ավեստայում)՝ Դևևա, լատիներենում՝ Դեուս, հին իռլանդականում՝ Դիա, հին գերմանականում՝ Դեյվա, հին իսլանդերենում՝ Դիվար, ռուսականում՝ Դիվ⁶ (дивный, дева բառերն այդ բառից են առաջացել) և այլն: Ավելին, Ավ. Իսահակյանը պարզել է, որ թուրքական և մոնղոլական առասպելներում ևս մենք տեսնում ենք «**Դյավ**-ին, որը լեզվական էվոյուցիայի մեջ հետզհետե ընդունել է Տվեն, Տվին..., Տուվաթ, Տավութ, Դավութ ձևերը: Մոնղոլական էպոսի մեջ առասպելական Չինգիզ-խանը կոչվում է Դավութ կամ Դավիթ, որը նշանակում է հենց մոնղոլ լեզվով էլ աստվածային»⁷:

⁴ **Ավետիք Իսահակյան**, Երկերի ժողովածու, հ. V, Եր., 1977, էջ 161:

⁵ Տե՛ս «Мифы народов мира». Энциклопедия: в 2-х томах, т. 1, М., 1991, էջ 221:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 178:

⁷ **Ավետիք Իսահակյան**, նշվ. աշխ., էջ 164:

Այսպիսով, միանշանակ կարելի է ասել, որ մեր էպոսի **Դավիթ** անուն-խորհրդի հիմքերը հրեական Բիբլիայում չպետք է տեսնել և ոչ էլ հնդարիական վեդաներում, քանի որ նրա ակունքները (համենայն դեպս՝ գլխավորները) հասնում են նախաարիական առասպելական ավանդույթներ: Առաջին հայացքից թվում է, թե այդ հանգրվանը հին իրանական նմանատիպ ավանդություններում պետք է տեսնել (հիրավի բազմաթիվ են հնդարիական և հին իրանական դիցաբանական ընդհանրությունները, ինչը վկայում է, որ այդ դիցաբանակարգերը մեկը մյուսի վրա ազդել են): Սակայն այս պարագային դա խաբուսիկ է:

Դիցաբանական ու կրոնական հնագույն աղբյուրները (Ռիգվեդան, Գիլգամեշը, Ավեստան, հրեաների սուրբ գիրքը՝ Բիբլիան) վկայում են, որ Հայկական լեռնաշխարհն է արիների (նրանց հավատքի, դիցաբանության, լեզվի...) բնօրրան-հայրենիքը, իսկ համաշխարհային ջրհեղեղից հետո նաև մարդկության սեմական հատվածի փրկության օրրանը⁸: Հնում հոգևոր այրերի համար հանրահայտ այդ ճշմարտությունը հետագայում կրոնների փոխազդեցությամբ մոռացության մատնվեց: Հնօրյա ճշմարտության վերականգնումը սկսվեց 19-20-րդ դարերում, երբ հետազոտողները սկսեցին ակնարկներ անել այդ մասին: Իսկ արդեն մեր օրերում հայ հետազոտողների ուսումնասիրություններում այդ ճշմարտության հիմնավորման (դիցաբանական, պատմական, լեզվաբանական...) փորձերի ենք ակննատես լինում⁹: Այդ ամենին անդրադարձը մեզ մեր թեմայից կշեղի. այստեղ միայն նշենք, որ հնդարիական ու արիական դիցապատումներում գոյություն ունեցող **դևա (դիոս, դիվ, դյուվա...)** խորհրդի նախահիմքերը պետք է փնտրել ոչ այլուր, քան հենց հայկական հնագույն դիցապատումներում: Ասում ենք՝ հնագույն, քանի որ հետագայում նախ պարսկական գրադաշտական դուալիստական, ապա քրիստոնեական միաստվածական կրոնի ճնշմամբ (այս կրոններում դևա-աստվածները ժխտվեցին, և հետևաբար դրանց պաշտամունքը խստիվ արգելվեց) **Դևա** (հայերեն՝ պարզապես Դև) բառ-խորհուրդն իր տեղը զիջեց ընդհանուր-վերացական իմաստ արտահայտող Աստված¹⁰ բառ-խորհրդին (այն հնագույն հայոց լեզվում գոյություն ունեցել է, թե ոչ դժվար է ասել):

⁸ Սեմականների նախնի Նոյի սերունդները դրախտավայրում գտնված ժամանակահատվածում, անտարակույս, կրել են տեղաբնիկների հավատքային, դիցաբանական, լեզվական... ազդեցությունները:

⁹ Տե՛ս, օրինակ **Մ. Գավուրջյան**, Արմեն ու հայ անունների ծագումը և Ուրարտուն, Պեյրութ, 1973, **Ալ. Վարպետյան**, Ինքնություն, Եր., 1993, **Հ. Ներսիսյան**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2011, **Ա. Պետրոսյան**, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Եր., 1997, **Պարիս Մ. Հերունի**, Հայերը և հնագույն Հայաստանը (հիմքերը հայոց), Եր., 2006:

¹⁰ Բառը լեզվաբանորեն կազմված է **աստ** (նշանակում է գերագույն, բացարձակ) բառից **վ**. կրավորական մասնիկով, և **ած** (պահել, մարմնավորել) արմատից, ու նշանակում է գերագույնի (բացարձակի) կրող, մարմնավորող (տե՛ս **Սլակ Կակոսյան**, նշվ. աշխ., էջ 17):

Սակայն հայ ոգու շտեմարաններ հայոց լեզուն և հայ բանահյուսությունը, որոնց կյանքի ընթացքին կրոնները չկարողացան միջամտել, **Դև** բառ-խորհուրդը պահեցին, գալիք սերունդներին հասցրին:

Պարզենք հայոց լեզվում **Դև** բառի իմաստը, որից և սերում է էպոսի մեզ հետաքրքրող **Դավիթ**-ը: «Սասնա ծռեր»-ի լեզվի լավագույն գիտակներ Մ. Աբեղյանը և Կ. Մելիք-Օհանջանյանը «**դիցազն**» բառի ստուգաբանության վերաբերյալ գրում են. «Դիք, սեռ. հոլ. դից, հին ձևով՝ դիւք, սեռ. հոլ. դիւց նշանակում է աստված, աստվածներ բարի և լուսավոր. «դիցազն» նշանակում է, ուրեմն, «դից-դիւց» - «դիվի» - աստծո սերունդ»¹¹: Որպես ենթադրություն կարելի է ասել, որ **Դիք**-ի հիմք բառարմատը **դի**-ն է¹², որը հնագույն հայերենում, թերևս, ունեցել է գերագույնի, բացարձակի, կատարյալի, մեծամեծի (գորեղագույնի, հավերժի, անմահի) աստվածային որակական գծերն արտահայտող իմաստները: (Իմիջայրոց նկատենք՝ արիական մյուս դիցավեզուներում շատ տարածված **դի/տի/տա** բառարմատը, որը այդ լեզուներում չի ստուգաբանվում, հենց հայերենի **դի**-ն է): **Ք**-ն հոգնակիակերտ մասնիկ է: **Դիք**, հետևաբար, նշանակում է կատարյալներ (մեծամեծեր, գորեղագույններ...), որպիսիք, հոմանիշ բառով ասած՝ աստվածները՝ բացարձակ տիեզերական գորություններն են: Միանգամայն ճիշտ են էպոսագետները, որ **դից**-ը դիտում են որպես **դիք**-ի սեռական հոլով, և հետևաբար՝ **դիցագուն**-ը (էպոսի որոշ պատումներում, օրինակ՝ քավառցի Հակոբ Նրզեյանի պատումում¹³, հերոսների ծագումնաբանությունն է նշանակում) ունի աստվածների սերունդ իմաստը (բառի **ազ**-ը նշանակում է սերում, ծագում): Սակայն, կարծում ենք, եթե խորամուխ լինենք **դև**-ի կազմության նրբերանգների մեջ, ապա նրանում **դի**-ի հետ մեկտեղ պետք է տեսնել նաև **ավ/օվ/էվ** բառարմատը (**ազ** բառարմատին հոմանիշ է, նշանակում է սերում, ծագում, պտուղ), որի ձայնավոր հնչյունը բառակազմվելիս սղվել է: Հետևաբար՝ «դիւ, դիւք, սեռ. հոլ. դիւց»-ը նշանակում է ոչ թե բուն աստվածներին՝ տիեզերական բացարձակ գորություններին, այլ նրանց երկրային սերունդներին (զավակներին), այսինքն՝ աստվածամարդկանց, աստվածների պես ամեհի տարերային գորություն ունեցող մարդ արարածներին (դիցազներգության մեջ, ինչպես նաև հայկական հեքիաթներում, **դև**-ը հենց այդ իմաստն է արտահայտում): Այս առումով այդ բառերը հոմանիշ են «դիցագուն»-ին¹⁴: Ինքնին հասկանալի է արդեն, որ **Դավիթ**-ն էլ նշանակում է **դիվ/դև**-ա-

¹¹ «Սասնա ծռեր», Բ հատոր, մասն 2-րդ, խմբ. Մանուկ Աբեղյանի, Եր., 1951, ծանոթագրություններ, էջ 830-831:

¹² Բառարմատի հնչյունափոխված ձևն է **տի**-ն, որը մենք տեսնում ենք, օրինակ, տիեզերք, Տիրայր, տիվ, Տիր, անտի բառերում:

¹³ Տե՛ս «Սասնա ծռեր», Բ հատոր, մասն 2-րդ, էջ 77, 83:

¹⁴ **Դև, դից** և **դիցագուն** բառերի միմյանցից «իմաստով ոչ հեռու» լինելը նկատել է Ղևոնդ Ալիշանը (տե՛ս **Ղևոնդ Ալիշան**, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 211):

յին ծագում ունեցող (**աս/իթ**-ը պատկանելության, ծագումի իմաստ է արտահայտում):

Ավելացնենք, որ հայոց լեզուն էլ (ինչպես հայ հավատքը) հեռու չի մնացել զրադաշտականության և քրիստոնեության ազդեցությունից՝ չկարողանալով անաղարտ պահել **Դև**-ի նախնական՝ դիցազուն դրական իմաստը: Բացի այդ՝ դև-ով մի շարք բացասական իմաստ արտահայտող բառեր են առաջացել՝ **դավ** (խարդախություն), **դավաճան**, **դիվահար**, **դիվություն**, **դիվոտել** և այլն, թեև մի քանի բառեր (օրինակ՝ **դավանել**, **դիվան**, **Դավիթ**) այնուամենայնիվ պահպանել են արքետիպային նախնին՝ դրական իմաստը¹⁵:

Գանք հայ բանահյուսական ավանդություններին, որոնցում **դև/դավ**-ն արդեն ավելի որոշակի կերպարանք է ստանում:

Երկար ժամանակ հայոց մեջ պահպանվել է հավատալիքն առ այն, որ հայերը դևերից են ծնունդ առել (այս պատկերացումը տևել է, թերևս, այնքան ժամանակ, քանի դեռ «մարդու որդու» կրոնը այն դուրս չի մղել): Այդ մասին է վկայում Մ. Խորենացին իր «Պատմության» մեջ հիշելով 5-րդ դարում Հայաստանի պարսից Շապուհ թագավորի ասածը Մոկաց իշխանին, թե «քարքարուտների մեջ արշավելը դևերի (այսինքն՝ իշխանի պես հայերի,- Մ. Մ.) գործն է», ինչին իշխանը պատասխանում է. «Եթե դու մոկացիներին դիվագգի ես կոչում, ես էլ Սասանյաններիդ կնամարդի կկոչեմ»¹⁶: Ինչ խոսք, պարսից թագավորը հայ իշխանին հենց այնպես չի ասել դիվագգի, այլ նրան՝ Հայաստանում այդ մասին պատմածներն են հուշել:

Այժմ անդրադառնանք «Սասնա ծռերի»-ին, որը **Դավիթ**-ը ստուգաբանելու գլխավոր աղբյուրն է: Ի դեմս մեր էպոսի արդեն ունենք շատ վստահելի աղբյուր, քանի որ եթե հայոց լեզվի վրա կրոնական ազդեցությունները այնուամենայնիվ նկատելի են, ապա խորքում այն զարմանալիորեն զերծ է դրանցից: «Հայտնի է համաշխարհային գրականության պատմությունից, - դարձյալ խոսքը տանք մեր բանաստեղծին, - որ քրիստոնեական կրոնը վտարել է էպոսների միջից դիցաբանությունը և նրա տեղը դրել է քրիստոնեական դոգմաները, կերպարները, հրաշքները, ինչպես «Ռոլանդի երգը», «Սիդը», «Պարսիֆազը», սակայն քրիստոնեությունը իր երկարատև գոյությամբ չի կարողացել խաթարել Սասունի (նույնն է թե հայոց,- Մ. Մ.) տան դիցաբանական էությունը»¹⁷: Գրեթե բոլոր պատումներում Սասնա տան դիցազնական ծագման մասին շեշտադրումը նկատելի է: Դա պես-պես ձևերով է արտահայտվում **Ջոջանց** (Մեծերի) **տուն**, **Ազնանք**, **Տեսակով մարդիկ**, **Ազնահուր մարդիկ**, **Հրածիններ** (**Հրեղեններ**), **Ազնանց տուն** և այլն, որոնցից յուրաքանչյուրը նորովի է ներկայացնում **Տան** դիցաբանական էությունը:

¹⁵ **Դավանել** բառի ազգակցությունը **դև**, **դից** բառերի հետ դարձյալ նկատել է Ղ. Ալիշանը (տե՛ս նույն տեղը, էջ 14):

¹⁶ **Մովսես Խորենացի**, Պատմություն հայոց, Եր., 1968, էջ 296:

¹⁷ **Ավետիք Բասիսյան**, նշվ. աշխ., էջ 161:

Մակայն էպոսի մի քանի պատումներում կա նաև մեզ հետաքրքրող խորհրդաբանությամբ **Տսև** բնութագրությունը, դրա՝ որպես դիվային տուն լինելը: Այսպես, օրինակ, պատումներից մեկում (Տարոնցի Կրպո) Մսրա տան պարտված հարկահաններից մեկը Սասնա տան մանկանց մասին ասում է. «Ըն ճրժեր, որ նոր են ելած, դիվանական են. /Ուրանց նետ կա քընց ձիթխըցի գերան, / Որ կը զարկեն, բերան կը բացվեր քընց պատուհան»¹⁸: Էպոսի հերոսների դիվական ծագում ունենալու, դևերից սերելու, իսկ նրանց հայրենիք-բնօրրանը այդպիսիների ծննդավայր (Դևստան) լինելու հարցում համոզված է նաև բանասաց մոկացի Վարդանը, որը իր պատումը ավարտում է հաստատապես համոզված, որ «Դավթի ազգ դեվրստաննիրուց ի»¹⁹: Ասացողն իր այս համոզմունքը գրի առնողի հետ զրույցում այսպես պատկերավոր է արտահայտում. «- Դավթի ցեղն հսկա դեվերեն հառաջ յեկած է և այդ ցեղի մարդիկներ ևս հսկա յեղած են, այնպես վոր այժմու մարդիկ անոնց գրպանը կը հավաքվելին. նաև թե՛ Դավթի ճանապարհին մի մարդ կը տեսնե, կը դնե գրպանը, կը բերե հոր դիվանը, ցույց կը տա, կը հարցնե, թե ինչ պիտի լինի այս կենդանին: Հայրն ևս կ'ասե, թե՛ սոքա ևս իրենց պես մարդիկ են, թեև փոքրիկներ են, սակայն խելքով են»²⁰: Որպես պարզաբանում ասենք, որ նկատի ունի այն, որ Դավթի ազգը հասարակ մարդկային ծագում չունի, նա սովորական («խելք», «պզտիկ», ինչպես էպոսի վերջում բնութագրվում է մարդու այդ տեսակը) մարդու տեսակից չէ, այլ հսկա, դյուցազուն՝ աստվածամարդկային, բացարձակ որակներ ունեցող է: Հիրավի էպոսում ոչ մեկ անգամ հանդիպող դևերի հետ Սասնա ծոերի համեմատությունը նրանց միջև ոչ քիչ ընդհանրություններ է երևան բերում (դրվագներից մեկում նրանք անգամ «խապերանում» են²¹), այն ոչ էական տարբերությամբ, որ դևերը մարդկանցից հեռու, անմատչելի տեղերում են ապրում, իսկ Սասնա ծոերը՝ մարդկանց հետ (անգամ օգնում են մարդկանց), թեև վերջիվերջո Սասնա ծոերի վերջին սերունդը՝ Փոքր Մհերը, այդ առումով էլ է նմանվում դևերին (նա, մինչ աշխարհի քանդում-շինումը, գնում-փակվում է «պզտիկ» մարդկանցից հեռու, անտեսանելի տեղում՝ Ագռավաքարում):

Այսպիսով, ամփոփելով ասենք՝ «Սասնա ծոեր» էպոսն իր հերոսներին դիվային (նույնն է թե՛ դիցազնական) ծագում է վերագրում, իսկ նրանցից մեկին, շեշտելու համար այդ ծագումնաբանությունը, պարզապես **Դավթի** անունն է տալիս, որը մերօրյա հայի համար էլ մնում է պիրելի անուն:

Բանալի բառեր – *ղևա, դի, դիք, աստված, դև, դիվածին, դիցազուն, Սանասար, Մհեր, Դավիթ*

¹⁸ «Սասնա ծոեր», խմբ. Մ. Աբեղյանի, Բ հատոր, 1-ին մաս, Եր., 1944, էջ 28:

¹⁹ «Սասնա ծոեր», խմբ. Մ. Աբեղյանի, Ա հատոր, Եր., 1936, էջ 378:

²⁰ Նույն տեղում, էջ 329:

²¹ Տե՛ս «Սասնա ծոեր», խմբ. Մ. Աբեղյանի, Բ հատոր, 2-րդ մաս, Եր., 1951, էջ 309:

СЕРЕЖА МАНУКЯН – Мифологическое и языковое значения слова «Давид» в эпосе о сасунских безумцах. – Имена героев армянского эпоса, нарекавшиеся высшему сословию племени, имеют характер племенных. А те, как правило, наделены мифологическим значением, ибо их носителям приписывалось происхождение свыше.

В случае с Санасаром и Мгером это не вызывает сомнений, о чём свидетельствует чёткое понимание названных имён, то с Давидом дело на первый взгляд обстоит иначе. Под влиянием самой читаемой армянами книги – Библии – создаётся впечатление, будто наш главный эпический герой носит имя библейского царя.

Но углублённое исследование приводит к принципиально другому мнению. В своё время Аветик Исаакян отметил, что основу имени Давид – дэва, что значит бог – мы видим в индоарийских и иранских мифологических верованиях, сложившихся задолго до еврейских преданий, составивших основу Библии. К этому в статье добавлено: поскольку предформа индоарийского *дэва* звучит по-армянски *дэв*, а *дэв* и *дав* суть одно и то же (произошла только смена гласного), то Давид означает рожденный от дэва.

Ключевые слова: дева, ди, дик, бог, рожденный от дева, Санасар, Мгер, Давид

SERYOJA MANUKYAN – The Mythological-Linguistic Meaning of the Word David in the Epic "Sasna Tsrer". – The names of the heroes of the Armenian epic "Sasna Tsrer" are not ordinary folk names, but tribal names (given to the "upper class" of the tribe). And they, as a rule, have mythological significance (which, of course, is connected with the fact that the bearers of names have mythological origin "from above").

However, if in the case of the names **Sanasar** and **Mher** this is not in dispute, as evidenced by a clear mythical and linguistic observation of these names, then with the name **David**, at first glance, this is not so: after all, under the influence of the most read book by the Armenians - the Jewish Bible, it seems that the name of our epic hero **David** comes from the name of King **David** from the Bible.

However, the expansion and deepening of the field of study give rise to a different, diametrically opposite view. In his time Av. Isahakyan noted that the basis of the name **David** - **deva** (means god) we see in the Indo-Aryan and Iranian mythological beliefs, as well as the mythological beliefs of other Aryan peoples, long before the Jewish Bible. Starting with a simple observation by a great writer, we add that- since the pre-form of the word **deva** is **dev** in Armenian, and **dev** and **dav** mean the same thing (there was only a simple change of vowel), then David means born of the dev.

Key words: *deva, di, dik, born of the dev, epic hero, Sanasar, Mher, David*

Ներկայացվել է՝ 16.09.2019

Գրախոսվել է՝ 10.10.2019

Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020